

**Ա.Ս. ԳՐԻԲՈՅԵՂՈՎՈՒ 19-ՐԴ ԴԱՐԻ ՀԱՅ ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՄՏՔԻ  
ԳՆԱՀԱՏՄԱՄԲ\***

**Կարեն Խանյան**

Դարերի պատմություն ունեցող հայ-ռուսական գրական կապերը երբեք չեն սահմանափակվել միայն մշակութային շրջանակներում, զնալով իմաստավորվել են որպես ազգային-քաղաքական նշանակություն ունեցող դարակազմիկ երևույթ:

Պատահական չէր հայ գրականության մեծանուն դասական Հովհաննես Թումանյանի «Վան ու Երևան» հոդվածը՝ գրված 1915թ.: Մեծ Լոռեցին հոդվածի հենց մուտքում ընդգծում է. «Սրանից հարյուր տարի առաջ էր, որ ընկավ Երևանը, և ռուսաց հաղթական զորքը ներս մտավ Երևանու բերդը, խլեց Հասան խանից ասիական բռնակալության սիմվոլը՝ Լենկթեմուրի թուրը՝ դրկեց Պետրոզարդ ու ռուս օֆիցերները գրական երեկոյթ սարքեցին պարսիկ սարդարի պալատում, առաջին անգամ ներկայացրին իրենց մի ընկեր օֆիցերի՝ Ա.Ս. Գրիբոյեդովի գրած պիեսը՝ «Դոբրո սոտրա»<sup>1</sup>: Ռուս զորքի հետ Երևանի բերդ մտան մեր կամավորները իրենց ազգային դրոշակով և իրենց ժողովրդական երգերով, որոնցից մի նմուշ է բերում Խ. Աբովյանը իր «Վերքի» մեջ» [1]: Ինչպես տեսնում ենք, Մեծ Լոռեցին հայ-ռուսական համագործակցության մեջ ընդգծում է նաև գրական կապերի անհրաժեշտությունը ապագա սերունդների կյանքում: Դրա վառ արտահայտություններից է Ա.Ս. Գրիբոյեդովի անմահ կատակերգության հաղթարշավը, որն սկիզբ է առել Հայաստանում և արտոնում է մեզ հպարտությանը նշելու, որ «Խելքից պատուհաս»-ը ռուս գրականության առաջին ծիծեռնակներից է, որը բնավորվեց հայ իրականության մեջ: 1827թ. դեկտեմբերին Երևանի սարդարի պալատի դահլիճում հեղինակի ներկայությամբ առաջին անգամ բեմադրվեց «Խելքից պատուհասը»:

Պիեսը բեմադրել են ռուս սպաները: «Խելքից պատուհասը» երկրորդ անգամ, դարձյալ հեղինակի ներկայությամբ, բեմադրվեց Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում, որը բացվել էր 1824 թվականին՝ կրելով այն ժամանակվա Ամենայն հայոց կաթողիկոս Ներսես Աշտարակեցու անունը: Հետաքրքիրն այն է, որ 19-րդ դարի 30-40-ական թթ. կազմակերպվում է նոր թատրոնն իր շենքով, խաղացանկով և անսամբլով, ինչպիսին էր Շերմազանյանի «Դարբասը»: Հաճելի է նշել այն հանգամանքը, որ թատերական այդ շարժմանը նպաստել են նաև Ա.Ս. Գրիբոյեդովի և՛ անմահ կատակերգությունը, և՛ նրա պայծառ անունը:

Թատերագետ Վ. Վարդանյանի հաղորդմամբ տեղեկանում ենք, որ Հայաստանի պետական մատենադարանում 1940-ական թթ. հայտնաբերվել է Գալուստ Շերմազանյանի «Նկարագրությունն ինչ-ինչ գործոց Կարապետ Եպիսկոպոսի» կատակերգությունը, որը գրվել է 19-րդ դարի 40-ական թթ. սկզբներին: Չնայած գեղարվեստական առումով աչքի չի ընկնում այդ երկը, սակայն գնահատելի արժեք է ներկայացնում նորաստեղծ հայ դրամատուրգիայի համար: Վ. Վարդանյանը նկատում է, որ պիեսում ակնբախ կերպով առկա է Գրիբոյեդովի «Խելքից պատուհասի» մերկացնող և խարազանող ուժի ազդեցությունը: Նա միաժամանակ նշում է, որ ամենայն հավանականությամբ

\* Հոդվածն ընդունվել է 13.04.2015:  
Հոդվածը տպագրության է երաշխավորել բ.գ.դ., պրոֆեսոր Ս.Խանյանը:

յամբ, Շերմազանյանը դիտել է Ներսիսյան դպրոցում Գրիբոյեդովի ստեղծագործության գլուխգործոց «Խելքից պատուհասը», յուրացրել նրա ավանդույթը: Վ. Վարդանյանը հայտնում է, որ Գ. Շերմազանյանն իր ժամանակին ժողոված է եղել Գրիբոյեդովի կյանքին վերաբերող բավական նյութեր, որոնք մինչև հիմա, դժբախտաբար, հայտնաբերված չեն: Միայն նրանց չնչին մասը մտել է նույն Շերմազանյանի «Նյութեր ազգային պատմության համար» աշխատության 9-րդ գլխի մեջ, որը վերաբերում է Գրիբոյեդովի ողբերգական վախճանին:

Հայ թատրոնի զարգացումը, ինչպես և ռուսականինը, ընթացել է բարդ ուղիներով: Առաջադիմական ուժերն ստիպված են եղել զաղափարական պայքար մղելու կղերական և հետադեմ ուժերի դեմ: Այսպես՝ 1859թ. Ներսիսյան դպրոցի շենքում բեմադրվում է Միքայել Պատկանյանի «Միջի մարդ կամ մոցիքով» կատակերգությունը: Որպես հայ դրամատուրգիայի վաղ շրջանի ներդրում, պիեսն առաջին հերթին աչքի է ընկնում նրանով, որ հեղինակը նկատելի ու քննադատել է հասարակության որոշ շրջանների արատավոր կողմերը, առանձնապես մոցիքություն բացասական դերը մարդկանց բարոյական կյանքում: Այսօրվա դիտակետից նույնիսկ զարմանալի է, երբ ծանոթանում են պահպանողականների հարձակումներին պիեսի ներկայացման առիթով: Այդ պայքարում առանձնապես աչքի ընկավ նրանց պարագլուխ Հակոբ Կարենյանը: Նա չէր հաշտվում պիեսի քննադատական ոգու հետ, գտնում էր, որ չի կարելի սև ներկերով արատավորել թիֆլիսի ազնվականության ներկայացուցիչներին՝ մոռանալով, որ ճշմարիտ արվեստի պարտականությունը կյանքի արատավոր կողմերը բացահայտելու և խարազանելու մեջ է: Բորբոքված Հակոբ Կարենյանը Միքայել Պատկանյանին անվանում է «Նոր Գրիբոյեդով»: «Մեղու Հայաստանի»-ի թերթի թղթակիցներից մեկը գրում է. «Հավաստի է, և համարձակ կարող եմ ասել, որ դուք հենց կկարդայիք առաջին և երկրորդ երեսը և զգվանքով կասեիք. «Զարմանում եմ հեղինակի վերա, որ նա ի լույս ընծայեց մի այդպիսի թատերգություն, որը կարելի է միայն բարեկենդանին ներկայացնել խաժամուժին և ոչ թե պատկառելի հասարակության առաջ»: [2]

Կարենյանը և նրա համախոհները դիմում են էջմիածնին, որի հետևանքով Միքայել Պատկանյանի պիեսն արգելվում է ներկայացնել Ներսիսյան դպրոցի բեմի վրա: Պատկանյանն իր պիեսի ներկայացումները տեղափոխում է Շերմազանյանի «Դարբասը»: Իր հերթին չի լռում նաև Մ. Պատկանյանը. որպես դրական օրինակ բերում է Գրիբոյեդովի «Խելքից պատուհասը» և ապացուցում նման պիեսների կարիքը հասարակական կյանքում: Նա գրում է. «Թատրոնական բեմի վրա ներկայացրած բնավորությունը երբեք չի կարելի ընծայել բոլորին: Գրիբոյեդովը, որի անունը հիշում է ինքը՝ պ. Կարենյանը, ցույց է տվել (իր հազվագյուտ «Горе от ума» կոմեդիայում), թե ինչպես Ֆամուսովի աղջիկ Սոֆիան իրա սիրողի հետ սաղ գիշերը փակված է իրա սենյակումը և աղախին Լիզան պահապան է կանգնած դռան մոտ և զարթեցնում է նրանց, որ աղջկա հայրը չգա և չտեսնի: Բայց էդոր համար, ոչ ոք չի ասել պ. Կարենյանցի պես, թե հեղինակը կանեցել է էս պակասությունը բոլոր ռուսաց նշանելու աղջկերանց վրա դնել կամ ասել, թե բոլորը էդպես են անում, թե հայտնի է, էս հատվածը ռուսաց ազգի առտնին կյանքիցն է վեր առած»: [3]

Կրկնակի զավեշտական է Կարենյանի այդ վրդովմունքն այն առթիվ, որ գրողը ցույց է տվել բեմի վրա համբուրվելը: Այս առումով ևս Պատկանյանն ստիպված է վկայակոչել Գրիբոյեդովի «Խելքից պատուհաս» պիեսը: Նա գրում է. «Մի՞թե պ. Կարենյանցի կարծիքով, Գրիբոյեդովն էլ չգիտեր քաղաքավարության կամ պարկեշտության կանոնները, երբ որ նա ոչ միայն լավ ընկերության, այլ սաղ աշխարհի մեջ, որտեղ շատերը անգիր գիտեն հռչակավոր «Горе от ума»-ի հեղինակությունը, նկարագրում է

հետևյալ տեսարանը և խոսակցությունը. «Էն անձինք, որոնց ստեղծել է Գրիբոյեդովը իրա կոմեդիոնը, մտացածին չեն, այլ դուրս նխշած են բնությունից իրանց սաղ հասակովը, հանած են գործնական կյանքի հատակից: Կարծում եմ, որ էս կանոնները պահպանված ըլլեն իմ կոմեդիայի վողկիլներումը, իսկ եթե ոչ, պ. կրիտիկոսը էտոնք էր պարտավոր ինձ ցույց տալու»[4]:

Դժվար չէ նկատել Գրիբոյեդովի «խելքից պատուհաս» պիեսի ազդեցությունը ոչ միայն հայ կատակերգության ժանրային ձևավորման, այլև դրամատուրգիայի տեսության զարգացման վրա:

Սակայն պետք է նշել, որ Գրիբոյեդովի «խելքից պատուհաս» կատակերգության առաջին բեմադրությունը հայ պրոֆեսիոնալ թատրոնում տեղի է ունեցել 1881թ.: Այդ տարվա հունվարի 8-ին Թիֆլիսի հայ դերասանական մշտական խմբի հայերեն լեզվով իրականացված ներկայացումը խոշոր իրադարձություն էր հայ թատրոնի կյանքում: Ընդգծենք նաև, որ Գրիբոյեդովի պիեսի բեմադրությունը ոչ ռուսական բեմի վրա առաջինն է, որ իրականացվեց հայոց բեմում: «Փորձ» ամսագիրը գրել է. «Այս տարվա հունվարի 8-ը նշանավոր օր պետք է համարվի այն ամենքի համար, որոնց սիրելի է արվեստը: Այդ երեկո հայ դերասանների մշտական խումբը ներկայացրեց Գրիբոյեդով ռուս բանաստեղծի անմահ կոմեդիան: Այդ գրվածքի ներկայացնելը մեծ պատիվ է բերում հայկական թատրոնի վարչությանն, ըստ որում մինչև այժմ աշխարհիս և ոչ մի բեմի վրա ներկայացված չեն այդ կոմեդիայի թարգմանությունը»[5]:

Ուշագրավ է այն երևույթը, որ «խելքից պատուհասի» առաջին ներկայացման ժամանակ գլխավոր կերպարի` Չացկու դերը մարմնավորել է հռչակավոր դերասան Պետրոս Ադամյանը, իսկ Սոֆիայի դերակատարը եղել է Սիրանույշը:

Գրիբոյեդովի «խելքից պատուհաս» պիեսի բեմադրության պատմությունը նոր ընթացք է ստանում 19-րդ դարի 90-ական թվականներին: Այս շրջափուլում աչքի է ընկնում ռուսական թատերական արվեստի առաջավոր ավանդույթներով կոփված Գևորգ Պետրոսյանը: Կրթություն ստանալով Պետերբուրգում` նա մի քանի տարի հանդես է եկել ռուսական բեմում, ապա տեղափոխվել հայրենի թատրոն: Հայտնի էր նաև նրա եղբայրը` Քրիստափոր Պետրոսյանը` նույնպես ռուսական թատրոնի գործիչ: Գևորգ Պետրոսյանի մարմնավորած դերերի պատկերասրահում առանձնահատուկ տեղ է հատկացված Գրիբոյեդովի Չացկուն: «խելքից պատուհաս» կատակերգության նոր բեմադրությունը միաժամանակ դառնում է անհրաժեշտ պատասխան պահպանողական գործիչներին` ի նպաստ ռեալիստական արվեստի ավանդույթների ամրապնդման: 1893թ. Գևորգ Պետրոսյանը վերջնականապես եկել էր հայ թատրոն և հենց Չացկու դերով հանդես եկել «խելքից պատուհաս» ներկայացման մեջ` արժանանալով տարբեր գնահատականների: «Արծազանք» թերթը «խելքից պատուհասի» բեմադրությունը գնահատեց որպես անհրաժեշտ երևույթ հայ թատերական արվեստի բնագավառում, որովհետև, ինչպես ընդգծում է թերթը, նրանում ծաղրի ենթարկված երևույթները հատուկ էին նաև հայ իրականությանը: «Արծազանքն» ընդգծում է. «Անշուշտ, այդպիսի մի գրվածք ներկայացնելը շատ ավելի միտք ուներ, քան զանազան «Օրվա չարիքներ», «Երկրորդ երիտասարդություններ» և այլն»[6]: Հայ թատրոնի պատմությունը պարտական է նաև տաղանդաշատ դերասան Հովհաննես Աբեյանին, որը միայն ռուս դրամատուրգիայից խաղացել է մոտ 70 դեր` այդ թվում մարմնավորելով նաև Չացկու կերպարը:

Անհրաժեշտ ենք համարում նշել, որ հայ մամուլի գնահատականը «խելքից պատուհասի» բեմականացմանը միանշանակ չի եղել: Ինչպես ռուսական գրական միջավայրում, այնպես էլ հայ իրականության մեջ մոտեցումն ընթացել է իրար հակասող հա-

սարակական ուժերի դիրքորոշումից: Այս առումով կարևորում ենք նշել «Փորձ» թերթում տպագրված դրական, արդարամիտ հոդվածը Գրիբոյեդովի կատակերգության բեմադրության առթիվ և «Մեղու Հայաստանի»-ի 1881 թվականի 129-րդ համարում զետեղված ժխտողական գրախոսությունը՝ ZZ ստորագրությամբ:

Ծանոթանալով ZZ-ի ընդդիմախոսությանը՝ չես տարակուսում, որ այն գրված է հետադիմական կղերական ուժերի հայեցակետով: Այն ոչ միայն զարմանալի է, այլև զավեշտական: Զարմանալի այն իմաստով, որ հայ իրականության մեջ գտնվել է մի հայ «մտավորական», որը, հասարակական դիրքից ելնելով, ոչ միայն ժխտել է արժեքավոր այդ երկը, այլև շրջանցել է մի այնպիսի գրող-դիվանագետի հիշատակը, որը դեռևս 1819 թվականի փետրվարին եղել է Երևանում, ծանոթացել երկրի և ժողովրդի կացությանը, պատմական հուշարձաններին, այցելել էջմիածնի վանք, Մատենադարան, տպարան, դպրոց և այլուր: Հետագայում զեներալ Պասկևիչի բանակում որպես դիվանագիտական գրասենյակի պետ մասնակցել է Երևանի, Սարդարապատի, Նախիջևանի ազատագրմանը, պարզևատրվել «Երևանի գրավման համար» մեղալուծ: 1828-ին մասնակցել է Թուրքմենչայի պայմանագրի կնքմանը, ապա նշանակվել Ռուսաստանի լիազոր մինիստր Իրանում:

Թուրքմենչայի պայմանագրի 15-րդ կետով, որ մտցվեց Գրիբոյեդովի առաջարկությամբ և ջանքերով, պարսկահայերին թույլատրվում էր գաղթել Արևելյան Հայաստան: 50 հազար պարսկահայերի ներգաղթը նշանակալի իրադարձություն էր Հայաստանի պատմության մեջ:

Ինչպես վերը նշեցինք, ZZ-ի ժխտողական վերաբերմունքը «Խելքից պատուհաս» երկին անընդունելի է, որովհետև ZZ-ը (Ջեթ Ջեթյանը - Կ.Խ.) իրեն դրսևորել է որպես հետադիմական ուժերի ներկայացուցիչ՝ բացառելով գրական մի այնպիսի կարևոր երկի նշանակությունը, որն արժանացել է ռուս հեղափոխական-դեմոկրատ, հզոր գրաքննադատ Բելինսկու բարձր գնահատականին:

Ահա թե ինչ է բարբաջել «Մեղու Հայաստանի»-ի սյուններից մեկը՝ ZZ-ը: Նա իր հոդվածի վերնագիրը՝ «Գրիբոյեդովի «Խելքից պատուհաս» կոմեդիան հայկական բեմի վրա», վերցրել է «Փորձ» պարբերականից: Հենց հոդվածի սկզբից նա հայտարարում է, որ իր հետաքրքրությունը շարժելու պատճառները մի քանիսն են, ու բերում է դրանք հերթականությամբ.

«Նախ՝ առաջին անգամ է, որ մենք հանդիպում ենք օտար մատենագրութեան մէջ յայտնի գրքի հայերեն թարգմանութեան վերայ քննադատութեան փորձին «Փորձ»-ի մէջ. երկրորդ՝ առաջին անգամն է, որ հայոց ներկայացումների մասին լեցնէնզհա է գրվում «Փորձի» մէջ և երրորդ՝ թարմանութիւնը, հայոց լեզուն, հայ ներկայացումները «Փորձի» մէջ քննողը հանդիսանում է մի վրացի իշխան»[7]:

ZZ-ը զարմանում և քամահրանքով շեշտում է, թե ինչու «Խելքից պատուհաս»-ի հայերեն բեմադրությունը գնահատում է մի վրացի: Նման վերաբերմունքը անթույլատրելի գռեհկության ամենացայտուն արտահայտություն կարելի է համարել: Ինչ է, վրացին չէ՞ր կարող արտահայտել իր կարծիքը՝ դրական կամ բացասական: Ինչ է, Նիկոլայ Մառը հա՞յ էր, որ ժամանակի՝ ազգությամբ մի շարք հայ հայագետների կարող էր դասավանդել և մատնացույց անել հայ մշակույթի խորքային ուսումնասիրության արդյունավետ ճանապարհը:

ZZ-ը, հիացած իր տգիտության և ազգային նեղ մտածողության շափաղումի վրա, իբր սրամտում է. «Գրիբոյեդովի թարգմանիչը կարող է պարծենալ, որ «Փորձ» ամսատետրին մի կրիտիկոս շնորհեց, թէպէտև վրացի»[8]:

ZZ-ը ցեխ է շարտուում նաև «Փորձի» խմբագրի վրա, որը վրացի ընկերոջ հողվածի համար որպես ծանոթություն բերել է հետևյալ գրությունը. «Պարոն յոդուածագիրը (էրիսթովը)՝ տեղական համակրելի և սրամիտ բանասերներից մէկը, հիմնաւորապէս ուսումնասիրած է Գրիբոյեդովի կօմեդիան... և յայտնի է ռուս գրականութեան մէջ իւր հետազոտութիւններով այդ բանաստեծի կեանքի և գրուածքների մասին...»[9]:

ZZ-ը «Փորձի» խմբագրին քննադատում է, թե ինչու է նախապես կարծիք հայտնում հողվածագրի մասին՝ չթողնելով, որ ընթերցողը կարդա և նրա համեմատ գնահատի հողվածագրի արժանավորությունը, շեշտելով, որ «Փորձ»-ի խմբագիրը «այս գլխից ստիպում է ընթերցողին, որ նա ընդունէ «Փորձի» մէջ տպած յօդուածը անպատճառ՝ իբրև մի երևելի գրչից բխած բան, և այս ամենը ինչ ո՛ւ համար, - որովհետև «Փորձն» է ասում, կարծում ենք, որ այդ շատ քիչ է, բայց շարունակենք ծանոթութիւնը»[10]:

Եվ ZZ-ը ամեն կերպ ծգտում է ընթերցողի վզին փաթաթելու իր կողմնակալ կարծիքը, որից նեխած ճահճի ճենճերահոտ է փչում: Նա «Փորձի» խմբագրին քննադատում է այն բանի համար, որ հայտնում է Երիսթովի մոր հայ լինելը:

ZZ-ի նախապես բերած ճամարտակութիւնները մի նպատակ են հետապնդում՝ ոչ թե ժխտել վրացի ընկերոջ կարծիքը Գրիբոյեդովի կատակերգութեան բեմադրութեան առթիվ, այլ խավարամտութեան իր որջից հարձակվել ու ոչնչացնել մեծանուն Գրիբոյեդովի դարակազմիկ երկը, որի լույսից առաջին հերթին սարսափում էին ոչ միայն ռուսական իրականութեան ազնվականութեան պահնորդ խավարամուլները, այլև նրանց հայ գաղափարակիցները: Այս է ճշմարտութիւնը:

«Մեղու Հայաստանի»-ի գաղափարախոս ZZ-ու առաջին հերթին կատաղում է «Փորձի» թատերախոսականի հետևյալ բնութագրումից. «Այդ երեկոյ հայ դերասանների խումբը ներկայացրեց Գրիբոյեդովի անմահ կօմեդիան» [11]:

Այս ընդգծումից հետո նա կրկին ու կրկին պահպանողականների անունից բորբոքված բացականչում է. «Մենք չենք հասկանում՝ պ. յօդուածագիրը «Անմահ» բառը ինչի տեղ է ընդունում... չենք հասկանում նույնպես, թե այդ կօմեդիայի մէջ ինչ բան կարողեօք անմահութեան արժանի»[12]: Եվ ոգևորված ինքն իր «հայտնագործութիւններով», նշում է, որ «Խելքից պատուաս» կատակերգությունը զուրկ է ինքնուրույն մտքերից, նոր կենսահայեցողութիւնից, մարդկային հոգին ու միտքը բարձրացնող և ոգևորող աստվածային վսեմ զգացմունքներից: Նա գտնում է, որ պիեսի հեղինակը չի կարողացել ստեղծել ընդհանուր մարդկութեան համար հետաքրքիր բնավորութիւններ, գեղեցիկ պատկերներ:

ZZ-ը ամեն դէպքում Գրիբոյեդովի պիեսում գտել է դրական մի երանգ: Ինչպես ինքն է նշում, «Մեր կարծիքով կօմեդիայի միակ նշանաւոր կողմը՝ նրա ոտանաւորի չափակցութիւնը և յանգերի կանոնաւոր ու յաջող ելևէջներն են, բայց այդ էլ կարող է միայն բուն ռուսին կամ բոլորովին ռուս գրականութեան նուիրուածներին հետաքրքիր անել, ինչպէս գրաբառականները կարող են պարծենալ հայր Բագրատունու «Հայկ Դիւցազնով», որի մէջ հայոց լեզուի ճոխութիւնն է երևում և այնչափ էլ երևելի է, որ շատ բան չի հասկացվում ինչպէս Գրիբոյեդովի կօմեդիան շատ տեղերում մութ է» [13]: ZZ-ը գյուտ արածի պես հայտարարում է, թե ովքեր են անմահ: Ինչպէս կարելի է «մի որևիցե» Գրիբոյեդովի դասել այնպիսի անմահների շարքը, ինչպիսիք են Շեքսպիրը, Գյոթեն, Շիլլերը, Բայրոնը և ուրիշներ:

«Մեղու Հայաստանի»-ի սյուններից ZZ-ն առաջ է քաշում նաև մի ուրիշ խնդիր՝ այն համարելով իր կարծիքը հաստատող կարևոր փաստ: Նա նախ բերում է «Փորձ»-ի հողվածից մի հարցադրում. «Մեր մէջ բնականապէս հարց է գարթում, թե ինչու ոչ մի

երոպական բեն չի փորձել ներկայացնելու այդ գրուածքը»[14]: Եվ հենց ինքն էլ, ըստ իրեն, պատասխանում է այսպես. «Որովհետև բենական կէտից այդ կօմէդիան աննշան, անպէտք է, որչափ էլ լաւ ներկայացնուի, այնուամենայնիւ, ծանծրայի է նա»[15]:

«Մեղու Հայաստանի»-ի պարուն հողվածագիրը առանց կոնկրետ օրինակ բերելու, լրիվ ժխտում է Գրիբոյեդովի պիեսի գլխավոր հերոսի՝ Չացկու կերպարի հաջողութունը, նրա մենախոսութիւնները համարում ոչինչ չատող, հասարակութեան համար ավելորդ խոսքաշար: Դեռ ավելին, ZZ-ը ընդգծում է. «Մի մարդ, որ Մալչայինի սիրուիուն՝ յիմար Սոֆիային է սիրում, մի մարդ, որ ինքն իրան հակառակելով մտնում է ամեն տեղ պատեհ թե անպատեհ ժամանակ իւր մօնօլոգները ասելու... նա ծաղր է յարուցանում, ատելի ոչինչ: Ճշմարիտ, խղճալ կարելի է Չացկու վրայ... որպիսի դրութիւնների մէջ է գցում նրան հեղինակը [16]:

ZZ-ը ծնացնում է, որ իրեն հուզում է նաև «Խելքից պատուհաս»-ի թարգմանութեան հարցը և իբրև հույս է հայտնում, որ պիեսի թարգմանիչ Կ. Տեր-Աստվածատրյանը հետագայում տպագրելու համար կվերանայի և կհղկի այն: Սակայն անմիջապէս անցնում է գնահատման իր բացասական տեսադաշտին և նշում. «Մեր մէջ բնականապէս հարց է գաղթում. ինչո՞ւ հէնց «Խելքից պատուհասի» թարգմանութեան վերայ սկսեց «Փորձը» խօսել... ինչո՞ւ մինչև օրս լռեց և լռում է նա այն հեղինակների թարգմանութիւնների մասին, յորոնց մօտ Գրիբոյեդովը մի թզուկ է» [17]:

Ահա հենց այստեղ ZZ-ը լրիվ բացահայտում է տգիտութեան հասնող իր կողմնակալ վերաբերմունքը և՛ Գրիբոյեդովի, և՛ «Փորձի» վերաբերյալ ու ամբողջութեամբ արհեստական ղնում իր հետադիմական հայացքները, որ բխում են «Մեղու Հայաստանի»-ի պահեստավորած հետադիմական գաղափարաբանութիւնից:

Տարիներն անցնում էին՝ իրենց հետ բերելով նոր հետաքրքրութիւններ, նոր էջեր ռուս գրականութեան արագ զարգացող գեղարվեստական գրականութեան վերաբերյալ: Հետաքրքրութիւնների շրջանակի մէջ էր նաև Ա.Ս. Գրիբոյեդովը և՛ որպէս գեղագետ, և՛ որպէս հայ ժողովրդի նվիրյալ գավակներից մեկը: 1895թ. Ռուսաստանը և նրա մշակույթի մեծ բարեկամները տարբեր երկրներում նշեցին Ա.Ս. Գրիբոյեդովի ծննդյան 100-ամյակը: Այդ միջոցառումը լայն արծագանք գտավ նաև հայ իրականութեան մէջ: Խոսքը մի այնպիսի գործչի մասին էր, որպիսին Գրիբոյեդովն է, որի նպատակներից մեկն էլ եղել է հայ ժողովրդի կյանքի գեղարվեստական արտացոլումը: Այդ է վկայում նրա՝ հայոց կյանքից վերցրած «Ռադամիստ և Ջենոբիա» ողբերգութեան ծրագիրը: Մի կողմից Ա.Ս. Գրիբոյեդովի հանդէպ ունեցած համակրանքը, մյուս կողմից 1890-ական թվականների քաղաքական խմորումները թելադրեցին ուշադրութեան կենտրոնում պահել և նշել մեծ գրողի 100-ամյա հոբելյանը: «Մշակը» գետեղեց «Գրիբոյեդովի սպանութիւնը» հոդվածը՝ Հ. Ա. ստորագրութեամբ: «Թատրոն» ամսագիրը տպագրեց մշակութային հայտնի գործիչ Մինաս Բերբերյանի «Ա.Ս. Գրիբոյեդով» հոդվածը: 1898թ. «Նոր դարը» տպագրեց ռուս անվանի հայագետ-գրականագետ Յուրի Վեսելովսկու «Գրիբոյեդովը և հայերը» ուսումնասիրութեան հայերեն թարգմանութիւնը:

«Մշակում» տպագրված հոդվածում Հ. Ա.-ն (Առաքելյանը) պատմում է Գրիբոյեդովի սպանութեան մանրամասները՝ ըստ նրա սուրհանդակ Համբարձումի վկայութեան: Վերջինս ականատեսն է եղել այդ ողբերգական դէպքերի: Մինաս Բերբերյանն իր հոդվածում առաջին անգամ հանգամանալից բնութագրել է Գրիբոյեդովի գրական-հասարակական գործունէութիւնը: Վերոնշյալ հոդվածների հեղինակների հիմնական միտումը հայ և ռուս գրական կապերի լուսաբանմանը նոր թափ հաղորդելն էր: Դա մի ժամանակաշրջան էր, երբ ռուս ռեակցիոն բուրժուանացիոնալիստական մամուլը («Նովոյե վրեմյա», «Մոսկովկսկիե վեդոմոստի», «Կավկազ» թերթերը) տպագրում էր հերյու-

րանքների հասնող հողավածներ հայերի մասին: Նրանց դեմ հանդես էր գալիս Յուրի Ալեքսանդրովիչ Վեսելովսկին՝ վկայակոչելով Պուշկինի, դեկաբրիստների, Գրիբոյեդովի ջերմ վերաբերմունքը հայ ժողովրդի, նրա դարավոր հարուստ մշակույթի նկատմամբ և պահանջում վերջ տալ նման հեղուրանքներին: Նա խարազանում էր այն մարդկանց, ովքեր «փրկուրը բերաններին դրոտում և պարսավում էին հայերին»[18]:

Իրանում Ա.Ս. Գրիբոյեդովի գործունեությունը զայրացրել էր այդ երկրի իշխանություններին: Վախենալով Իրանում ռուս ազդեցության ուժեղացումից՝ Ֆաթեհ-Ալի շահի հրոսակները հարձակվեցին ռուսական դեսպանատան վրա և սրի քաշեցին բոլոր աշխատողներին, այդ թվում և լիազոր մինիստրին:

Գրիբոյեդովի դիակը տեղափոխվեց Թիֆլիս: Ճանապարհին, Դվալի լեռնանցքում Ա.Ս. Պուշկինը հանդիպել է Գրիբոյեդովի դիակը Թիֆլիս տանող սայլին: Հանդիպման վայրում աղբյուր-հուշարձան է կանգնեցված:

Գրիբոյեդովի ողբերգական մահը խոր վիշտ է պատճառել հայ ժողովրդին: Էջմիածնի մայր տաճարում հոգեհանգստի պատարագ է մատուցվել նրա հիշատակին: Ժողովրդի բազմությունն ամենուրեք դիմավորել ու ճանապարհել է Գրիբոյեդովի դիակը Թիֆլիս տանող սայլը: «Նելքից պատուհաս» կատակերգությունը թարգմանվել և բազմիցս բեմադրվել է հայկական թատրոններում: Ի հավերժացումն Գրիբոյեդովի հիշատակի՝ Երևանում 1975-ին կանգնեցվել է նրա հուշարձանը (քանդակագործ՝ Ն. Բեջանյան): Երևանում և Հայաստանի Հանրապետության այլ քաղաքներում կան Գրիբոյեդովի անվան փողոցներ ու դպրոցներ: Իր անկախությունը ձեռք բերած Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մայրաքաղաքի կենտրոնական թիվ 3 դպրոցը կրում է ռուս հանձարեղ գավակ Ա.Ս. Գրիբոյեդովի անունը: Մայրաքաղաքի փողոցներից մեկը ևս կոչվում է երկու ժողովուրդների անձնուրաց այդ գավակի անունով: Երևանում և Ստեփանակերտում հաճախի կազմակերպվում են Գրիբոյեդովյան ընթերցանություններ: Նրա ստեղծագործությունները դարձել են ականավոր գրականագետների ուսումնասիրության առարկա: Երիտասարդ մասնագետները գիտական թեզեր են պաշտպանում անմահ գրողի գրական ժառանգության թեմաներով:

Հայ գրականության հզոր դեմքերից մեկը՝ Ավետիք Իսահակյանը, որին դեռևս 1915 թվականին Վալերի Բրյուսովն անվանել է Եվրոպայի անմրցակից բանաստեղծ, Մոսկվայի փառապանծ 800-ամյակին նվիրած ողջույնի խոսքում ռուս գրական մեծագույն վարպետներ Կռիլովի, Պուշկինի, Գերցենի, Լերմոնտովի, Դոստոևսկու, Օստրովսկու և մյուսների շարքը սկսում է Գրիբոյեդովի անունից, ընդգծելով նրա անմոռանալի ծառայությունը հայ-ռուսական դարավոր բարեկամության ամրապնդման փառավոր գործում: Հիրավի այդպես է: Գրիբոյեդովի գործը այն անկյունաքարերից է, որի վրա հառնել է երկու ժողովուրդների անխախտ բարեկամության հավերժալույս շենքը:

## **ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

1. Հ. Թումանյան, Ուսումնասիրություններ և հրապարակումներ, 1962, էջ 35:
2. «Մեղու Հայաստանի», 1860, թիվ 26:
3. «Մեղու Հայաստանի», 1860, թիվ 45
4. «Մեղու Հայաստանի», 1860, թիվ 47:
5. «Փորձ», 1881, թիվ 1:
6. «Արծազանք», Թիֆլիս, 1893, թիվ 41:
7. «Մեղու Հայաստանի», 1881, թիվ 129:

8. Նույն տեղում:
9. Նույն տեղում:
10. Նույն տեղում:
11. Նույն տեղում:
12. Նույն տեղում:
13. Նույն տեղում:
14. Նույն տեղում:
15. Նույն տեղում:
16. Նույն տեղում:
17. Նույն տեղում:
18. «Նոր դար», 1898, թիվ 201, 203, նոյեմբերի 7 և 8:

### ԱՄՓՈՓԱԳԻՐ

#### Ա.Ս. Գրիբոյեդովը 19-րդ դարի հայ քննադատական մտքի գնահատմամբ Կարեն Խանյան

Սույն հոդվածում քննարկվում են «Խելքից պատուհաս» կատակերգության առնչությունները հայոց թատերական կյանքի հետ: Նշվում է, որ «Խելքից պատուհասը» առաջին անգամ բեմադրել է 1827թ. դեկտեմբերի Երևանի Սարդարի պալատի դահլիճում՝ հեղինակի ներկայությամբ: Պիեսը բեմադրել են ռուս սպաները: Այն երկրորդ անգամ, դարձյալ հեղինակի ներկայությամբ, բեմադրվել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում: Ընդգծվում է, որ ինչպես ռուսական, այնպես էլ հայ իրականության մեջ պահպանողականները ժխտել են պիեսի հասարակական արժեքը, իսկ առաջադիմական ուժերը այն համարել են խոշոր ներդրում համաշխարհային թատերական մշակույթի պատմության մեջ:

*Բանալի բառեր՝ գիտական կապեր, Թումանյան, Գրիբոյեդով, Խելքից պատուհաս, 1827 Երևան, «Մեղու Հայաստանի», «Փորձ», «Արձագանք», «Նոր դար», Հայոց թատրոն»:*

### РЕЗЮМЕ

#### А.С. Грибоедов в оценке армянских критиков XIX в. Карен Ханян

В данной статье определяется место комедии “Горе от ума” в армянской театральной жизни. Отмечается, что “Горе от ума” была поставлена в декабре 1827 года русскими офицерами в Ереване во дворце Сардара с участием автора. Комедия была поставлена во второй раз также с участием автора на сцене Нерсисяновской школы в Тбилиси. В статье подчёркивается, что как и в русской, так и в армянской действительности либеральные силы отрицали общественное значение пьесы, а передовые силы пьесу считали крупнейшим вкладом в мировую театральную культуру.

**Ключевые слова:** литературные связи, Туманян, Грибоедов, “Горе от ума”, Ереван-1827, “Мегу Айастані”, “Սորց” “Արձագանկ”, “Նոր ար”, Արմանկի տատր.



**SUMMARY**

**A.S. Griboyedov in the assessment of the Armenian critical thought of the XIX century.  
Karen Khanyan**

The article determines the place of the comedy "Wit Works Woe" in the Armenian theater life. It is noted that "Wit Works Woe" was staged in December, 1827 in Sardar's palace in Yerevan by the Russian officers with author's participation. The comedy was staged for the second time, also with participation of the author on a scene of the Nersisyan School of Tbilisi. The article emphasizes the idea that both Russian and Armenian liberal forces denied public value of the play, and the advanced forces considered the play the largest contribution to world theatrical culture.

**Keywords:** *literary ties, Tumanyan, Griboyedov, "Wit Works Woe", Yerevan-1827, "Meghu Hayastani", "Ports" "Arzagank", "Nor dar", the Armenian theater.*